Social Security

«Ամփոփ Տեղեկություն»

www.socialsecurity.gov

«Ամփոփ Տեղեկություն»

Սույն հրատարակությունը տալիս է Սոցիալական Ապահովության, Լրացուցիչ Ապահովության Եկամուտի (SSI) եւ Մէտիքէրի ծրագիրների մասին ամփոփ բացատրություն: Նշված ծրագրերի մասին մանրամասն տեղեկություն ստանալու համար այցելեցեք ***www.socialsecurity.gov***, որտեղ նաեւ կարող եք գտնել մեր հրատարակությունները:

Ձեր Սոցիալական Ապահովության համարը

Սոցիալական Ապահովության նպաստները հիմնվում են այն հասույթի վրա, որը արձանագրվում է մեր մոտ ձեր գործատիրոջ կողմից (կամ ձեր կողմից՝ եթե ինքնաշխատ եք), օգտագործելով ձեր Սոցիալական Ապահովության համարը: Ուստի, շատ կարեւոր է որ դուք միշտ օգտագործեք ձեր ճիշտ Սոցիալական Ապահովության համարը: Միեւնույն ժամանակ, դուք պետք է աշխատանքի վայրում օգտագործեք այդ անունն ու ազգանունը որը գրված են ձեր Սոցիալական Ապահովության քարտում: Եթե փոխեք ձեր անունն ու ազգանունը դուք պետք է նաեւ փոխեք անոնք ձեր Սոցիալական Ապահովության քարտում: Սոցիալական Ապահովության այս ծառայությունը անվճար է: Ձեր երեխաների ծնունդից անմիջապես հետո դուք պետք է նրանց համար Սոցիալական Ապահովության թիվ ստանաք: Դուք պետք ունեք նրանց համարը ձեր դաշնակցային հարկերու հայտարարագրման (federal income tax return) մէջ նրանք արձանագրելու իբրեւ խնամքի տակ գտնվող անձիք:

Ինքնության գողություն

Ուշադիր եղեք ձեր Սոցիալական Ապահովության քարտի եւ համարի նկատմամբ ոպեսգի կասեցնեք ինքնության գողությունը: Աշխատանքի ընդունվելուց ցույց տվեք քարտը ձեր գործատիրոջ, որպեսզի ձեր հաշիվը ճիշտ լինի: Այնուհետեւ, դրեք այն ապահով մի տեղ: **ՄԻ՛** կրեք քարտը ձեզ հետ:

Ստուգեք ձեր հաշվեցոյցի ճշտությունը

Ծայրահեղ կարեւոր է, որ ձեր անունն ու ազգանունը եւ Սոցիալական Ապահովության համարը համաձայնվեն Սոցիալական Ապահովության Վարչության, ձեր գործատիրոջ եւ W2 թղթիկի վրայ եղած տեղեկությունների հետ, որպեսզի մենք կարողանանք ձեր հասույթը արձանագրել ձեր տակ: Եթե ձեր Սոցիալական Ապահովության քարտը ճիշտ չե, փոփոխություններ կատարելու համար դիմեք Սոցիալական Ապահովության ցանկացած գրասենյակին: Եթե ձեր W-2 թղթիկը սխալ է, ձեր գործատիրոջ տվեք ճշգրիտ տեղեկությունը:

Դուք կարող եք նաև ստուգել Ձեր վաստակած գումարը՝ Սոցիալական ապահովության Ձեր հաշվետվությունում: Հաշվետվության առցանց տարբերակից կարող են օգտվել առնվազն 18 տարեկան աշխատող անձինք: Ձեր հաշվետվությունը տեսնելու համար այցելեք ***www.socialsecurity.gov/mystatement*** և ստեղծեք հաշիվ: Եթե Ձեր հաշվետվությունում ընդգրկված չեն Ձեր բոլոր եկամուտները, ապա որևէ անճիշտ տեղեկության մասին հայտնեք Ձեր գործատուին և Սոցիալական ապահովության գրասենյակին:

Սոցիալական Ապահովության հարկերի վճարում

Եթե դուք աշխատում եք այլ անձի մոտ, ձեր գործատէրը ձեր վարձատրությունից պահում է Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի հարկերեւ ուղարկեում է նանք Հարկային Վարչության (Internal Revenue Service—IRS): Ձեր գործատէրը նաեւ վճարում է Հարկային Վարչության ձեր վարձատրությունից պահված գումարին հավասար զուգահեռ վճարը: Ձեր ամբողջ հասույթը արձանագրվում է Սոցիալական Ապահովության մոտ:

Եթե դուք ինքնաշխատ եք, եկամուտի հարկային հայտարարագիրը լրացնելու ժամանակ դուք վճարում եք Սոցիալական Ահովության եւ Մէտիքէրի հարկեր, իսկ Հարկային Վարչությունը ձեր հասույթի մասին տեղեկություն ուղարկում է Սոցիալական Ապահովության: Դուք վճարում եք գործատիրոջ եւ աշխատողի լրիվ հարկերը, սակայն գոյություն ունեն հատուկ եկամտահարկի պահումներ, որոնք ձեր հարկերը կարող են փոխհատուցել:

Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի հարկերը չեն պահվում ձեր անունի տակ բացված հատուկ հաշվի մեջ: Նրանք օգտագործվում են վճարելու այսօր նպաստներ ստացող մարդկանց՝ ինչպես ձեր ապագա նպաստները վճարվելու են ապագա աշխատողների կողմից:

Սոցիալական Ապահովության վարկեր վաստակելը

Աշխատելով եւ Սոցիալական Ապահովության հարկեր վճարելով դուք վաստակում եք «վարկեր», որոնք հաշվի են առնվում Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու իրավասու լինելո համար (կախյալ ձեր հասույթից, յուրաքանչյուր տարի դուք

կարող եք վաստակել առաւելագոյնը չորս վարկեր): Ընդհանրապէս մի անձ նպաստների պահանջները բավարարելու համար պետք ունի 10 տարվա աշխատանքային վարկեր: Երիտասարդ աշխատողներ հաշմանդամության կամ վերապրողների նպաստներու պահանջները բավարարելու համար ավելի փոքր թվով վարկեր կարող են ունենան:

Սոցիալական Ապահովության նպաստների պատկերացում

Ընդհանրապէս, ձեր Սոցիալական Ապահովության նպաստը որոշվում է ձեր կյանքի ընթացքում ստացված հասույթի միջին տոկոսի համեմատությամբ: Ցածր եկամուտ ունեցող աշխատողները ստանում են ավելի բարձր տոկոսի համեմատություն, քան բարձր եկամուտ ունեցողները: Միջին հասույթով աշխատող մի անձ կարող է ակնկալել ծերության նպաստ, որը հավասարելու է կյանքի ընթացքում իր միջին հասույթի մոտ 40 տոկոսին:

Սոցիալական Ապահովությունը երբեք չի նախատեսվել որպես կենսաթոշակառուների, հաշմանդամների եւ վերապրողների եկամուտի միակ աղբյուրը: Այս նպաստների նպատակն է ամբողջացնել այլ եկամուտները, որոնք դուք ստանում եք անձնական կենսաթոշակային ծրագիրներից, խնայողություններից եւ ներդրումներից:

Սոցիալական Ապահովության նպաստներ

Ձեր Սոցիալական Ապահովության հարկերը հաւաքվում են երեք տեսակ նպաստների համար՝ ծերության, հաշմանդամության եւ վերապրողների կապակցությամբ:

www.socialsecurity.gov

Եթե Դուք իրավասու եք կենսաթոշակային կամ հաշմանդամության նպաստներ ստանալու, ապա Ձեր ընտանիքի որոշ անդամներ նույնպես կարող են նպաստներ ստանալ: Նրանց թվում են՝ Ձեր կինը/ամուսինը, եթե նրա տարիքն առնվազն 62 է կամ 62-ից ցածր, բայց հոգ է տանում մինչև 16 տարեկան կամ 16-ը լրացած բայց հաշմանդամ և Ձեր վրա գրանցված երեխայի մասին, ինչպես նաև Ձեր երեխաները, եթե նրանք ամուրի են կամ նրանց 18 տարեկանը դեռ չի լրացել, կամ 18-19 տարեկանը լրացած այն երեխաները, որոնք հաճախում են տարրական դպրոց կամ ավագ դպրոցի առկա բաժին, կամ՝ առնվազն 18 տարեկան, բայց հաշմանդամ երեխաները: Եթե Դուք ամուսնալուծված եք, Ձեր նախկին կինը/ամուսինը կարող է իրավասու լինել՝ Ձեր աշխատանքային եկամուտի հաշվառման հաշվին նպաստներ ստանալու:

Կենսաթոշակի անցնել

Եթե դուք բավականաչափ աշխատել եք, մենք ձեր նպաստները վճարում ենք ձեր լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքում (կրճատ նպաստներ մատչելի են 62 տարիքից սկսյալ): Եթե դուք ծնվել եք մինչեւ 1938 թվականը, ձեր լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը 65 է: Լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը աստիճանաբար բարձրանում է, հասնելով 67 տարուն այն մարդկանց համար, որոնք ծնվել են 1960 թվականին կամ ավելի ուշ: Եթե դուք հետաձգեք ձեր լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը մինչեւ 70, դուք նաեւ կստանաք հատուկ վարկ յուրաքանչյուր ամսվա համար որ նպաստ չեք ստացել: Եթե որոշեք հետաձգել ձեր կենսաթոշակի անցնելը 65 տարեկանից հետո, դուք անպայման պետք է դիմեք Մէտիքէրի, ձեր 65-րդ տարեդարձի շուրջ երեք ամսվա ընթացքում:

(շրջել)

Հաշմանդամություն

Նպաստներ կարող ենք վճարել ձեզ որեւէ մի տարիքում եթե դուք բավականաչափ երկար աշխատել եք եւ ունեք լուրջ մարմնական կամ մտային հիվանդություն, որը ակնկալվում է որտեվի առնվազն մեկ տարի կամ ավարտվի ձեր մահով: Մի՛ հետաձգեք դիմելը մինչեւ աշխատանքից դուրս գալու մեկ տարին լրանա, որովհետեւ հաշմանդամության նպաստներ ապահովելը կարող է մի քանի ամիսներ տեվի:

Վերապրողներ

Եթե Դուք մահանաք Ձեր ընտանիքի որոշակի անդամներից առաջ, ապա նրանցից որոշները կարող են իրավասու լինել նպաստներ ստանալու: Նրանց թվում են՝ այրիները (ինչպես նաև ամուսնալուծված այրիները), զավակներն ու խնամարկյալ ծնողները:

Մէտիքէր

Մէտիքէրի ունի չորս մասեր: Աշխատելու ընթացքում դուք վճարում եք Մէտիքէրի հիվանդանոցի բաժնի ապահովագրության հարկ: Այս մասը երբեմն կոչվում է Մաս Ա (Part A): Այս ծառայությունը օգնում է հոգալ հիվանդանոցի, ծերերու մասնագիտական բուժարանի (skilled nursing) խնամքի եւ այլ ծառայությունների հետ կապված ծախսերը:

Մէտիքէրի մնացյալ երեք բաժինների համար դուք վճարում եք ամսական շահաբաժին: Անոնք են՝ Մաս B, Մաս C եւ Մաս D. Մաս B-ն (Part B) բժշկական ապահովագրություն է, որն օգնում է վճարելու բժիշկների ծառայությունների, հիվանդանոցից դուրս ստացված խնամքի, բժշկական այլ ծառայությունների եւ պաշարների ծախսերը: Մաս C-ն (Part C) կոչվում է Մէտիքէրի Առավելության Ծրագիր: Անհատներ որոնք ունեն Մաս A եւ Մաս B կարող են ստանալ իրենց բժշկական լրիվ ծառայությունները Մաս C ընդունող բժշկական կացմակերպություններից: Իսկ վերջին բաժինն է Մէտիքէրի դեղագիրով

դեղորայք գնելու ծրագիրը, Մաս D (Part D), որն օգնում է վճարելու դեղագիրով գնվելիք դեղորայքի ծախսերը:

Ծանուցում. *Դուք իրավասու եք Մէտիքէր ստանալու ձեր 65-րդ տարում: Սա վերաբերվում է բոլոր մարդկանց, նույնիսկ 1938 թվականին եւ ավելի ուշ ծնվածներին, որոնք լրիվ ծերության նպաստներ ստանալու համար պետք է լինեն 65 տարեկանից ավելի:*

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ

Լրացուցիչ Ապահովության Եկամուտը ամսական է վճարում այն մարդկանց, որոնք ունեն ցածր եկամուտ եւ նվազ դրամական միջոցներ: Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանալու համար դուք պետք է 65 տարեկան կամ ավելի տարեց լինեք նաք, կամ էլ լինեք կույր կամ հաշմանդամ որեւէ տարիքում: Լրացուցիչ Ապահովության Եկամուտը վճարում է հաշմանդամ մեծահասակների եւ երեխաների:

Ձեր ստանալիք Լրացուցիչ Ապահովության Եկամուտի գումարը կախյալ է ձեր եկամուտից, դրամական միջոցներից եւ ձեր ապրելու վայրից: Դաշնակցային կառավարությունը վճարում է մեկ մասը, իսկ որոշ նահանգներ այդ գումարի վրայ ավելացնում են: Կարող եք ստուգել ձեր Լրացուցիչ Ապահովության Եկամուտի գումարը Սոցիալական Ապահովության տեղական գրասենյակում: Առհասարակ, SSI ստացող անձինք կարող են ստանալ նաև Medicaid, Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրի նպաստներ (SNAP) և այլ օժանդակություն:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանալու համար աշխատած լինելը անհրաժեշտ չէ: Լրացուցիչ Ապահովության Եկամուտի վճարները հայթայթվում են ընդհանուր հարկային եկամուտից եւ ոչ՝ Սոցիալական Ապահովության հարկերի միջոցով:

Երբ եւ ինչպես դիմել Սոցիալական Ապահովության կամ Լրացուցիչ Ապահովության Եկամուտի

Կենսաթոշակային նպաստների համար դիմեք այն ամսաթվից մոտ երեք ամիս առաջ, երբ ցանկանում եք, որ դրանք սկսեն վճարվել: Եթե դեռևս պատրաստ չեք թոշակի անցնելու, բայց մտադիր եք մոտ ապագայում անել դա, խորհուրդ ենք տալիս այցելել Սոցիալական ապահովության վարչության կայքը: Եթե Դուք արդեն սոցիալական ապահովության բավարար միավորներ ունեք՝ նպաստներ ստանալու իրավասության համար, կարող եք օգտվել ***www.socialsecurity.gov/estimator*** կայքէջում գտնվող մեր՝ Կենսաթոշակի առցանց հաշվարկիչից: Կենսաթոշակի հաշվարկիչը ֆինանսական պլանավորման հարմար, ապահով և արագ գործիք է, որը հնարավորություն է ընձեռում՝ ստեղծելու Ձեր անձնական «ինչ, եթե» սցենարները: Եթե դեռևս բավարար միավորներ չունեք՝ նպաստներ ստանալու պահանջներին բավարարելու համար, ապա ***www.socialsecurity.gov/planners*** կայքէջում մենք առաջարկում ենք այլ նպաստների հաշվարկիչներ: Կենսաթոշակային կամ հաշմանդամության նպաստների համար կարող եք դիմել առցանց՝ ***www.socialsecurity.gov*** կայքում:

Դուք պետք է դիմեք Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստների կամ Լրացուցիչ Ապահովության Եկամուտի երբ ձեր հաշմանդամության աստիճանը ձեզ թույլ չի տալիս որաշխատեք: Երբ մեռնում է ընտանիքի ապրուստ շահող անձը, դուք պետք է անմիջապէս մեզ հետ կապ հաստատեք որպեսզի ձեր իրավունքների մասին տեղեկություն ստանաք:

Նպաստներ դիմելու ժամանակ դուք պետք է ներկայացնեք փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս ձեր իրավասությունը, օրինակ, նպաստների համար դիմող յուրաքանչյուր ընտանիքի անդամի ծննդյան վկայականը, ամուսնության վկայականը, եթե դիմում է ձեր

ամուսինը (կինը), եւ ձեր վերջին W-2 թղթիկը (կամ հարկային հայտարարագիրը, եթե դուք ինքաշխատ եք):

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10006-AM
A “Snapshot” (Armenian)
July 2012